

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՐԱՍԶԱՆ ՏԵՂԱԿԱՆԻՆ ՀՆՈՒԳԻՐԸ

Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Ս. Գեորգ Ս. Արքեպիսկ. Զեօրեֆեան, Երեւանէն, 10 Հոկտեմբեր 1941 րուակիր հետեւեալ հեռագիրը ուղկած է Ս. Արքեպիսկ. Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր.

«Փութով մեզ զրկեցէք ժառանգաւորաց Վարժարանիդ ընդունելութեան պայմանները: Աշակերտներ պիտի զրկենք»:

ՏԵՂԱԿԱՆ ԶԵՐԻՔԶԵԱՆ

Սրբազան Պատրիարք Հայր պատասխանեց յիշեալ հեռագրին ու հապտոյեց խնդրուած տեղեկութիւնները այդ մասին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ ԵԿԵՂԵՅԻՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ս. Յարութեան Տանարին մէջ Հայոց սեփական, եւ հայկական նահապետութեան իր ուսագրաւ յօրինուածով Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին ծանօթ է բոլոր անոնց՝ որոնք իբրեւ ուխտաւոր՝ գիտեն երուսաղէմը:

Ս. Արքեպիսկ. փրկելու համար կարելի վստահեմ այս հայկական գեղեցկութիւնը, տարիներ առաջ յաջողեցաւ ստանալ պետական վարչութեան, վերանորոգման անհրաժեշտ աւանդութիւնը: Վերանորոգման արգիւնքը ամեն կերպով լաւ եղաւ: Եկեղեցին ամբողջովին նորոգուեցաւ սրբաւար մարմարով: Վար տունը լեցան բոլորն ծեփերը, եւ եկեղեցին երեւան եկաւ իր բարեղեմ գեղեցկութեամբ: Վայսաֆանդակ խաչկալներն ալ փոխանակուեցան ֆարէ երկու նոր խորաններու խաչկալներով, հայկական ոնով: Իսկ ասիւնաններն ու դասերը տշանակուեցան բոնգէ բազիկներով:

Կը մնար այս գեղեցիկ եկեղեցին զարդարել նկարներով, քէ՛ իբրեւ իրաւունք եւ քէ իբրեւ կրօնական անհրաժեշտութիւն: Այս նպատակաւ Ս. Արքեպիսկ. հրաւիրուեցաւ Պ. Օճեկ Աւետիսեան տաղանգաւոր նկարիչը, ուսած Վիեննայի Կրօնիք արուեստներու պետական վարժարանը, եւ ապա Հոռովի գեղարուեստից բարձրագոյն ակադեմիան: Յայնի այս արուեստագէտը, որ յաջողած բազմաթիւ նկարներ ունի, վստահ եմք քէ պիտի կրնայ հայ ոնին մէջ գեղեցկացած Ս. Գր. Լուսաւորչի եկեղեցիին արուեստի այս բաժինը լիովին գոհացնել: Յաջողութիւն կը մաղթեմք իրեն:

ՏՕՆ ԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 11 Հոկտ. Եր. — Տօն Գեորգայ զօրավարին. — Երէկ երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, ըստ սովորութեան, կատարուած էր Ղըրտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Այսօր, առաւօտեան ժամերգութիւնը ի Ս. Յակոբ կատարելէն յետոյ, Միաբանութիւնն ու աշակերտութիւնը, զխաւորութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. ի գնաց Ղըրտոց Ս. Գեորգ եկեղեցին մատուցանելու համար Ս. Պատարագը: Քարոզեց Տ. Հայկազուն Վրդ. ցոյց տալով հոգեկան այն քաջութիւնը որով սուրբը կրցաւ անարգել հեթանոս աստուածներու պաշտամունքները:

— Երեկոյին, Վարագայ Խաչի տօնին առթիւ, զխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Միաբանութիւնը «Հրաշմիտ» յով հանդիսաւոր մուտք գործեց Ս. Յարութեան Տաճարէն ներս, որմէ յետոյ կատարուեցաւ կիրակմտից ժամերգութիւնը եւ նախատօնակը, Հայոց վերնատան մէջ:

✱ 12 Հոկտ. Կիր. — Տօն Վարագայ Սրբոյ Խաչին. — Ամբողջ Միաբանութիւնն ու աշակերտութիւնը առաւօտ կանուխէն, զխաւորութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. ի, հանդիսաւոր երթով Ս. Յարութեան Տաճարը գնաց: Հայոց վերնատան մէջ առաւօտեան ու գիշերային ժամերգութիւնները կատարելէն վերջ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին լիբայ: Պատարագեց ու քարոզեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., ցոյց տալով թէ Քրիստոսի խաչը խորհրդանշանը եղաւ Աստուծոյ սիրոյն մեծութեան: Եւ թէ սիրոյ այդ խորհրդանշանը յայտնութիւնն էր միւսնոյն ժամանակ Աստուծոյ սրբութեան եւ արդարութեան:

Ս. Պատարագէն վերջ, Միաբանութիւնը, զըխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ ներկայ էր Ս. Պատարագի սկզբնաւորութիւնէն սկսեալ, դէպի վանք վերադարձի տահուն, ճամբան թափօր կազմած եւ «Նշանաւ ամենայաղթ խաչի քո Քրիստոս» երգելով Պատրիարքարան ելաւ, ուր, Լուսարարապետ Հայր Սուրբը, Վարագայ Խաչի տօնին առթիւ, արեւատութիւն մաղթեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որուն ծըննդեան 70 ամեակը եւ Ս. Աթոռոյս մէջ իր միաբանական կեանքին 55 ամեակն էր: Նորին Ամենապատուութիւնը զգաժուած բառերով յայտնեց իր շնորհակալութիւնը, յիշեցնելով որ ինք՝ «անցեալ զաւուրք», պատասխանատու այս պաշտօնին ծանրութիւնը սիրով պիտի կարենայ կրել, միմիայն սրտանուէր գործակցութեամբը Միաբանութեան բոլոր անդամներուն: — Պատուասիրութիւնէն վերջ ամենքը մօտեցան ի համբոյր Նորին Ամեն. Ս. Աջոյն՝ երջանիկ տարին եւ մաղթանքով:

✱ 13 Հոկ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Քարոզեց Տ. Շաւարշ Վրդ., յիշ գնայր Յիսուս ի Տաճարի՝ ընթանալով, ցոյց տալով, թէ ամէն քրիստոնէսայ իր կենցաղովը այնպիսի ընթացք մը պէտք է ի յայտ բերէ, որ

կարենայ Աստուծոյ տաճարին՝ աշխարհին մէջ, համարձակորէն չըջիլ, որպէսզի չնախատուի Քրիստոնէութիւնը հեթանոսներու մօտ, և որպէսզի նաեւ չստիպուինք օւրանալ մեր Տէրը:

✱ 25 Հոկտ. Եր. — Մերոց Թարգմանչաց Վարդապետաց մերոց Մեսրոպայ, Եղիշի, Մովսէսի երբողին, Գուրգի անյալք փիլիսոփային, Գրիգորի Նաւեկացոյն եւ Ներսէսի Կալեցոյն: — Երէկ, երեկոյեան ժամերգութիւնէն վերջ կատարուած էր նախատօնը Մերոց Թարգմանչաց: Այսօր, ի Ս. Գաղար, Ս. Պատարագը մատուց Նոգ. Տ. Արթուր վրդ., որ և քարոզեց «Որք զարգարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին» քնարանով: Ըստ, թէ հակասական կը թուի սա օրերուն Թարգմանչաց տօնը, երբ եկեղեցւոյ խաղաղ միջնորդակէն անդին կեանքը պայքարի մէջ է: Եւ սակայն պատմութեան մէջ սուրբ քաղաքակրթութիւն չէ հիմնած: Պատմութիւնը հանդիսարանն է անոնց որոնք տաճարներ կը կանգնեն, մշակոյթներ կը ստեղծեն, քաղաքակրթութիւն կը հիմնեն: Եւ զարեւու ընդմէջէն իսկ քաղաքակրթութիւն, աշխարհի սուրբ կեանքի գրիչին փոխակերպեցին և անեղին խնամք քերին հոգիներուն:

✱ 2 Նոյեմ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գաղար, Բարդուղէ Նոգ. Տ. Եղիշի վրդ.: «Չուր ուրեմն վաստակէի, յոյնն խուզօրութիւն իմ» քնարանով: Ժողովէ վերջ յետ Քրիստոսի զարեւու մէջէն յուսահատութեան, բարձրացուածեան, հոգեկան, իմացական արժէքներու ընկերութիւն չըջանները, լուսաւոր դարերու հակադրաբար, ցոյց տուաւ թէ ներկայ դարը հոգեկան արժէքներէն ընկերութիւն չըջան մըն է: Վասնզի մարդիկ, գիտուններ, ընկերաբաններ փորձած են չորիկոնը իրենց խռատութեան, կը խուսափին Գերագոյնը ճանչնալու ճիգէն, սարսափելով իրենց անկարողութենէն և կամ գոհանալով իրենց մտքին հրաշքովը:

✱ 9 Նոյեմ. Կիր. — Գիւտ խաչ. — Երէկ, «Հրաշափառ»ի հանդիսաւոր մօտքէն վերջ, երեկոյեան ժամերգութիւնը և Գիւտ Խաչի նախատօնակը կատարուեցաւ Ս. Գարութեան Տաճարին կից հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, նախապատկանութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նոր. Այսօր առաւօտ, թէ՛ ժամերգութիւն և թէ՛ Ս. Պատարագ մատուցուեցաւ նոյն եկեղեցւոյն մէջ, խուռն բաղմութեան ներկայութեան: Ժամերգութեան «Հարց» չարականի երգեցողութեան ընթացքին, Քրիստոսի խաչին մատուցելու եկեղեցւոյ Ս. Սեղանէն փոխադրուեցաւ և զետիղուեցաւ խաչին զանուած տեղւոյն վրայ, որ մօտ է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին: Յաւարտ Ս. Պատարագի, մեծաւոր թափօր կատարուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ երեցո զարծմամբ, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նոր:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

✱ 8 Հոկտ. Դշ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Սեւոյեան իր տիկնոջ հետ, Լիբանանի օդափոխութենէն իրենց վերադարձին երուսաղէմէն անցնելով, այցելեցին Ամեն. Ս. Պատրիարք Նոր. — Նորին Ամենապատուութիւնը Երուսաղէմէն ընդունելութիւն մը ըրաւ պատուական հիւրերուն, որոնց հետ առիթ ունեցած էր տեսնուիլ Լիբանանի մէջ և այցելել Ազունիէի Ազգ. Բուժարանը: — Ամեն. Ս. Պատրիարք Նայրբ իրենց հիւրերու կարգեց Աւագ-Թարգմանի փոխանորդ Նոգ. Տ. Գրիգոր Արեղայ Սահակեանը, որպէսզի առաջնորդէ զիրենց այցելելու Ս. Գաղարեանց Սայր-Տաճարը, Ս. Աթոռոյ միւս Հաստատութիւնները, ինչպէս նաեւ քաղաքի եւ զուրափ տնօրինական և պատմական Սրբավայրերը:

✱ 9 Հոկտ. Եշ. — Տնօրէն Ժողովոյ անդամ Նոգ. Տ. Գէորգ վրդ. ձանսեան միամետաղ արձակուրդով մեկնեցաւ Լիբանան և Սիւրիա:

✱ 21 Հոկտ. Դշ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Նայրբ, հետն ունենալով առժամեայ զիւանապետ Նոգ. Տ. Սերովբէ վրդ., Բամազանի պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ քաղաքի իսլամական Բարձր Ժողովին, և տեղւոյ իսլամ Աւագանիէն քաղաքապետ Մուսթաֆա Պէյ էլ-Խալաթին, Օգնական Զիֆ-Սէք-Էթէրի Բուշի Պէյ Ապտէլ Հասիին, Իսմայիլ Պէյ Հիւսէյնիին և նախորդ քաղաքապետ Բաղդադ Պէյ Նէշաշիլիին:

✱ 22 Հոկտ. Դշ. — Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Նոր այցելեց Գաշիքէն Կէֆէ Պէյ՝ որդին՝ Աղնուաշուք Տիգլին Աննա Ն. Պաշտոն Դալի Փաշայի:

— Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Նոր այցելեցին Աղն. Տէր և Տիգիլ ձանիկ Զաքըր:

— Տես միջօրէի, Ամեն. Ս. Պատրիարք Նոր այցելեցին Գաշիքէն Աղն. Տէր և Տիգիլ ձանիկ Օհանջանեան և Տիար Դասպար Իքէքեան: — Բոլոր յարգելի հիւրերն ալ Նորին Ամենապատուութեան կողմէ ընդունուեցան Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ և մեծարուեցան Հայաստանի գինիով, զոր երեանէն հետը բերած էր Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.:

✱ 23 Հոկտ. Եշ. — Կէսօրին, Աղն. Տէր և Տիգիլ ձանիկ Զաքըր Քինկ Տէյլիւ Օթէլին մէջ ճաշասեղանով պատուեցին Ամեն. Ս. Պատրիարք Նայրբ՝ որուն կ'ընկերանար Լուսաւորապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.:

✱ 29 Հոկտ. Դշ. — Այսօր, (յ. մ.), Թուրքիոյ Հանրապետութեան տարեդարձին առթիւ, ըստ հրաւերի քաղաքի Թրքական Ընդհ. Հիւպատոս Վսեմ. Պաշ Ժէլալ Թէֆֆիք Գորասաբանի, Ամեն. Ս. Պատրիարք Նայրբ հետն ունենալով առժամեայ զիւանապետ Նոգ. Տ. Սերովբէ վրդ., ներկայ գտնուեցաւ Թրքական Հիւպատոսարանին մէջ կատարուած ընդունելութեան, ուր ներկայ էին նաեւ Պաղեստինի և Սիւրիոյ Զինուորական Ուժերու Ընդհ. Հրամանատար Փէնէրալ Վիւսըն, Պաղեստինի Բարձր Գոմիսէրի Օգնական, տեղւոյն Հոգեւոր Պետեր, քաղաքային և զինուորական բարձր պաշտօնեաներ և երուսաղէմի աւագանին: